№ 94 Մայիսի 27 (Յունիսի 8) 1881 Մայիսի 27 (Յունիսի 8) № 94

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գրում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
յուրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մոսկվայից։ Ներքին լուրեր։ — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Բոլգարիա։ Ֆրանսիա։ Գերմանիա։ Արտաքին լուրեր։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Դաւիթ բէկ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մայիսի, 17-ին

Համարեա մինչև 60 թուականները ռուս զբրականութեան մէջ ոչ ոք չէր համարձակվում աղատապէս յարձակվելու հոգեորական դասի պակասութիւնների վրա։ Մի կողմից խիստ հոգեոր ցենզուրան, միւս կողմից մի քանի հասարակական պայմաններ սանձահարում էին պուբլիցիստի գրիչը։ Բայց չատ չանցաւ և հանգամանքները փոխվեցան։ Մամուլին շնորհվեց համեմատաբար աւելի ազատութիւն և առողջ կրիտիկական միտքը միջոց ստացաւ անխնայ քննելու և հարուածելու հոգեորականութեան կեանքի և գործունէութեան թոյլ կողմերը։ Ներկայումս թէ պարբերական գրականութեան և թէ բելլետրիստիկայի մէջ հոգեորականութիւնը ենթարկվում է քննադատութեան ուրիշ դասակարգութիւնների հետ հաւասարապէս։ Ռուս հասարակութիւնը նայում է այդ կրիտիկական յարձակումների վրա ոչ թէ ինչպէս մի անտեղի, պարադոքսային երևոյթի, այլ ինչպէս անհրաժեշտութեան վրա։ Անհրաժեշտութիւն են համարում այդ մինչև անգամ հոգեոր օրգանները, ինչպէս «Церковно-общест. Вѣстникъ» գեղեցիկ, ազատամիտ լրագիրը։

Չը նայելով որ մեր լրագրութիւնը («Մշակը» զլխաւորապէս) մի քանի տարի է արդէն անդադար քրքրում է հոգեորականութեան և հոգեոր կառավարութեան անվայել պակասութիւնները, չը նայելով որ հասարակութիւնը բոլոր սրտով համակրում է այդ անաչառ *) կրիտիկային, անհրաժեշտ պահանջ համարելով նրան,—գտնվում են մեր մէջ այնպիսի անհատներ, որոնք յենուելով ժողովրդի կրօնական ֆանատիկոսութեան վրա մինչև անգամ մամուլի միջոցով աշխատում են տարածել այն ցնդաբանական միտքը՝ թէ հոգեորական դասի վրա յարձակվելով, լրագրութիւնը վայր է դցում եկեղեցու բարոյական ավտորիտետը, սպառնում է խախտելու լուսաւորչականութեան հիմունքները։

Մամուլի այդ անբարեխիղճ ներկայացուցիչների վերաբերութեամբ մենք միջոց ենք ունեցել մի անգամ խօսելու, այժմ հարկաւոր ենք համարում բերել այստեղ ռուս պայծառամիտ կրիտիկոս Դոբրոլիւբովի կարծիքը այս հարցի մասին՝—«Ուղղափառութեան հիմունքներին երբեք չի վնասի, եթէ սկսեն գրել, օրինակ, հոգեոր կոնսիստորիաների վրա, բարձր և ցածր հոգեորականների մէջ եղած յարաբերութիւնների վրա, հոգեոր դպրոցների ուսումնական մասի կազմակերպութեան վրա և այլն,.. Մինչև կոնսիստորիաների հատատութիւնը, ապրոնոմիայի կամ բժշկականութեան աւանդումը դպրոցներում և այլն որոշված է Սուրբ Գրքով, կամ ժողովներով և կամ սուրբ հայրերի թելադրութեամբ. այդ ժամանակաւոր պահանջների ծընունդ է և նրանց հետ համաձայն կարող է փոխուել... Ինչ որ վերաբերում է հոգեոր սպասաւորների անձնական պակասութիւններին, այստեղ, կարծեմ, հարկաւոր էր կատարեալ ազատութիւն տալ գրելու ամեն բան առանց սահմանափակութեան և այնքան աւելի համարձակ, որքան բարձր է այն հոգեոր անձը, որի վրա գրում են։ Թող սուտն էլ գրվի—վնաս չունի. եկեղեցու սպասաւորը—աստիճանաւոր չէ, որի գործունէութիւնը կորչում է նրա նման հարիւրաւորների մէջ։ Քահանայի վրա դարձած են ամբողջ ծուխի աչքերը—մի քանի հարիւր, մինչև անգամ հազար մարդիկների։ Եթէ նրան գրպարտեն ազազական խօսքով—այդ գրպարտութիւնը միշտ կարելի է հերքել և դրանից յետոյ ճշմարտութիւնը աւելի պայծառ լոյսի մէջ կերևի. իսկ եթէ գրպարտեն ծածուկ, բերանացի, մէկ մէկու ասելով—այդ գրպարտութիւնը մթութեան մէջ մնալով՝ միշտ կը բամբասեն, իսկ նա միջոց չի ունենայ հերքելու այդ բամբասանքները, որովհետև նրանք անմատչելի են. իսկ անմատչելի բանի հետ ինչպէս կուիս։

«Դրողների մէջ մինթէ բոլորն էլ բամբասողներ և չարագործներ են. կան և այնպիսիները, որոնք գրում են միայն ճշմարտութիւն, անկեղծ բարի ցանկալով։ Ի՞նչու նրանց էլ ընդհանուրի չափով չափել և նրանց նկատողութիւններին ձայնաւորութիւն չը տալ։ Մինթէ պէտք է կարծենք, թէ հոգեոր դասակարգութիւնը վախում է, որ նրա պակասութիւնները չը բացվեն ուրիշների առաջ։ Այդ կը լինէր մի չափազանց տխուր երևոյթ....

«Աշխարհական դասակարգութիւնները, խոնարհելով ընդհանուր ուղղութեան առաջ, թոյլ են տալիս հրապարակապէս հարուածելու իրանց պակասութիւնները և այդ հարուածողներին յանցաւոր չեն համարում։ Իսկ հոգեորականութիւնը պէտք էր, կարծեմ, որ ինքը խոնարհութեան օրինակ տար ուրիշներին. նա պէտք է ուրիշներից աւելի լաւ յիշէր սկզբնական քրիստոնէական հասարակութիւնը, որի մէջ կար բաց, նրա ընդհանուր խոստովանութիւն. նա պէտք է միշտ յիշէր Պողոս առաքեալի օրինակը, որ չը վախենալով ոչ մի հետևանքներից նորադարձ քրիստոնեաների առաջ մեղադրեց Պետրոսին թուլութեան և երկդիմութեան մէջ այն պատճառով, որ նա հաւասար չէր վերաբերվում դէպի կռապաշտութիւնից քրիստոնեայ ընդունած հրէաները։ Իսկ ինչ ենք մենք տեսնում—բոլորեքեան հարուածում են իրանց պակասութիւնները, բոլորեքեան աշխատում են յայտնել ճշմարտութիւնը իրանց կեանքի և կենցաղավարութեան մասին. միայն հոգեորականութիւնը ոչ թէ միայն լռում է, այլ և ատելութեամբ է նայում ամեն մի ուրիշի վրա, որ ձգտում է երևան հանելու նրա պակասութիւնները.... Աբժանի է արդեօք այդ եկեղեցու ճշմարիտ սպասաւորներին, — որոնք պէտք է աշխարհականներին խնքնազոհութեան, խոնարհութեան և ճշմարտասիրութեան օրինակ տան» (III հատոր, «Заграничныя пренія о положеніи русскаго духовенства» յօդուածում)։

Մի quasi-լրագրում Էջմիած. ճեմարանի արժանաւոր սաներից մէկը Ակակիի ֆրազներից աւելի դարդակ դատողութիւններով աշխատում էր արդարացնել Էջմիածնում կատարվող անկարգութիւնները նրանով, որ Էջմիածինը մեծ գործ է կատարել պատմական անցեալում։

«Մի ուրիշ հեղինակ—ասում է Դոբրոլիւբովը այդպիսիների մասին—ուզում է ապացուցանել, թէ անարդարութիւն է մեղադրել ներկայ հոգեորականութիւնը զանազան պակասութիւնների մէջ, որովհետև նա ունեցել է օգտակար ազդեցութիւն մեր պատմութեան վրա... Կարծես այդ երկու բանը կարելի է մէկ մէկու հետ կապել։ Այդպիսի յօդուածների դէմ վիճել անկարելի է պարզ է, որ նրանց հեղինակները աւելի սիրում են ֆրազներ, քան թէ գործ և նրանց հետ հակաճառելը կը լինի переливаніе изъ пустаго въ порожнее» (ibid)։

Հռչակաւոր կրիտիկոսի յայտնած մտքերը ամենապարզ կերպով ցոյց են տալիս որ հոգեոր գործունէութեան և կենցաղավարութեան թոյլ կողմերի վրա յարձակվելը «ոչ թէ մի վնասակար հակա-եկեղեցական վարմունք է, այլ մի անհրաժեշտ պահանջ։

Եկեղեցին առանձին բան է՝ նրա սպասաւորները առանձին։ Միայն վատը հարուածելով, անկարգութիւնները քրքրելով, պակասութիւնները մատնելով և բոլոր անվայել երևոյթները անխնայ քննադատութեան տակ զցելով կարելի է հասնել այն նպատակին, որ հոգեորականութիւնը ապրի, վարուի և գործի այնպէս, ինչպէս հրամայում է քրիստոնէական վարդապետութեան բուն ոգին։

Ս. Դաղեանց

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

ԺԲ.

Դէպի Զէվու բերդը տանող ճանապարհի մի կողմում, աղբիւրի մօտ, որ հովանաւորված էր չինարի ահագին ծառերով, նստած էին մի քանի յոգնած ուղեորներ։ Թուփերով պատած լեռների մէջ տիրում էր կէսօրվայ տօթը։ Ուղեորներից մի քանիսը պառկած էին խոտերի վրա և հանգիստ քնի մէջ էին։ Իսկ երեք հոգի, որ նոր էին հասել այնտեղ, առանձնացած էին միւսներից, նստել էին մի կողմում, ճաշում էին։ Նրանց առջև դրած էր մի կտոր պանիր և չոր հաց։

—Այնքան չորացել է հացը, որ չէ ուտվում, ասաց սեղանակիցներից մէկը։

—Առանց սումբայի հրացանը լցնել չես կարող, նրան պատասխանեց սեղանակիցներից միւսը,—այդ հացին սումբայ պէտք է։

Նա հանեց պարկի միջից խեցեղէն փոքրիկ աման, լիքը արաղով, առաջ ինքը խմեց, յետոյ տուեց ընկերներին, ասելով.

—Աստուած է վկայ, մարդու կոկորդը փափկացնում է։

Միւսներն էլ ընդունելով ամանը, խմեցին, մի և նոյն կարծիքը յայտնելով փափկացնող գոնէ այսպէս երևում էր այն բոլոր գործիքներից, որ նրա մօտ գտնվում էին։ Նա իր ամբողջ խանութը իր վրա բարձած ունէր։ Կաչեայ լայն գոտիի առջևի կողմում ունէր մի պահարան, զինուորների փամփուշտներ դարսելու պահարանի նման, այն զանազանութեամբ միայն, որ փամփուշտների փոխարէն այնտեղ խրած էին ածելիներ, մկրատներ և բութ նշտարը, որով երակներից արիւն էր բաց թողնում։ Աջ կողմում, նոյն գոտիից քարշ էր ընկած նրա երկայն յետանաքարը և մի ահագին քալփաթին, որով ատամներ էր դուրս քաշում և որը աւելի յարմար էր էշի ոտներից նալեր պոկելու համար։ Ձախ կողմում, նոյն գոտիից քարշ էր ընկած նրա մեծ լագանը, որի մէջ մաղեր էր թրջում։ Առջևից կախված էր սև ժապաւէնի նման մի երկայն կաշի, որի վրա սրում էր ածելիները։ Եթէ աւելացնենք դրանց վրա՝ մի կոտրած հայելի, որ նա պահած ունէր իր ծոցում, և փոքրիկ մաղաշը, որով քթի մաղեր էր դուրս քաշում,—կը ստանանք մի օրինաւոր սափրիչի արհեստի բոլոր պարագայքը։ Մոռացանք յիշել, որ նոյն կաչեայ գոտիի խորշրդաւոր պահարաններից մէկի մէջ կար բաւական քանակութեամբ բամբակ, որից նա սափրելու միջոցին կպցնում էր ածելիով կտրած տեղերը, որ արիւնը դադարի։

Ինչպէս աշուղները ըստ մեծի մասին կոյր են լինում, այնպէս էլ գիւղական սափրիչները կամ կաղ են լինում, կամ սպասող։ Մեր վարպետը վերջին տեսակիցն էր, այն առաւելութեամբ, որ նա ունէր երկու սպասաներ, մէկը մէջքի վրա, միւսը կուրծքի վրա։ Այդ երկու սպասաների միջից, մի փոքրիկ գունդի նման,

*) Մենք ասում ենք անաչառ, որովհետև անկարելի է կարծել, որ լրագրութիւնը կամ առհասարակ գրողները ունենան անձնական հաշիւներ հոգեորականութեան հետ այս խօսքի ընդհանուր մտքով։

ամպելիի մասին, և այժմ աւելի ախորժակով սկսեցին ուտել չոր հացը։

Երբ ճաշը վերջացած էր, նրանցից մէկը ժամացուցի փոխարէն նայեց արևին, իր ընկերին ասաց.

—Հիմայ կարելի է ճանապարհ ընկնել, շուտով զօվը կը սկսվի։

—Կարելի է, աւելացրեց միւսը,—մեր առջևում անտառը աւելի խիտ է, արևը չատ չի նեզացնի։

—Ինչպէս էլ և լինի, պէտք է գնալ. դեռ բաւական ճանապարհ ունենք, ասաց երրորդը։

—Արեգակը ինչ կարող է անել. խօ ձիւն չենք, որ հալվենք։

Սկսեցին պատրաստվել։

Այդ միջոցին միւս ուղեորներից մէկը, պառկած տեղից գլուխը վեր բարձրացնելով, ծոյլ կերպով հարցրեց.

—Եղբայրներ, ո՞ւր էք գնում։

—Դէպի Զէվու, պատասխանեցին նրան։

—Հիմայ Զէվուից ամենքը փախչում են, դուք ինչ խելքով այնտեղ էք գնում։

—Ի՞նչու են փախչում։

—Զէ՞ք լսել, շուտով Զէվուն կը պաշարվի Դաւիթ-բէկի զօրքերով։ Նրա բանակը հիմայ գտնվում է բերդից ոչ այնքան հեռու Ղարաչիման գիւղի մօտ։

—Մեզ ինչ վնաս, եթէ կը պաշարվի, ասաց երեք ընկերներից մէկը։

—Ձեզ այն վնասը կը լինի, որ վտանգի մէջ կընկնէք, պատասխանեց ուղեորը դարձեալ չը շարժվելով իր պառկած տեղից։—Շատ ախորժելի բան չէ պաշարված բերդի մէջ լինել, երբ ամեն կողմից կրակ են թափում։

—Բայց բաւական ախորժելի բան է պաշարված բերդից կռվել թշնամու դէմ, ասաց երեք ընկերներից մի ուրիշը։

—Ի՞նչ ասել կուզէ, պատասխանեց պառկած ուղեորը հեգնական կերպով,—ձեզ խիստ սաղ է գալիս թշնամու հետ կռվելը.... Աւելի լաւ կանէք, որ գնաք ձեր բանին, ինչպէս տեսնում եմ, կռիւը ձեր գործը չէ։

—Բոլորովին ուղիղ է քո ասածը, խօսեց երեք ընկերներից մէկը։—Շնորհակալ եմ, եղբայր, որ մեզ զգուշացրիք. մենք արհեստաւոր մարդիկ ենք. Զեվուի մէջ այժմ հազիւ թէ կարելի կը լինի մի աշխատութիւն գտնել, երբ ամեն մարդ իր գլխի համար է մտածում։ Մենք կը գընանք մի ուրիշ կողմ, արհեստաւոր մարդուն ամեն տեղ հացը պակաս չի լինի։

Նրանք բոլոր ժամանակը խօսում էին թուրքերէն։ Պառկած ուղեորը նկատելով, որ իր խրատները ազդեցութիւն գործեցին երեք ճանապարհորդների վրա, գլուխը կրկին դրեց խոտերի վրա, աչքերը փակեց, սկսեց քնել, ասելով.

—Գնացէք, Աստուծուն եմ յանձնում ձեզ։

Ցոյց տալով թէ ուրիշ կողմ են գնում, նրանք դուրս եկան դէպի բերդը տանող ճանապարհից։ Բայց երբ բաւական հեռացան աղբիւրից, երբ ծածկվեցան բլուրների ետևում, իսկոյն շեղվեցան իրանց բռնած ուղղութիւնից և կրկին բռնեցին բերդի ճանապարհը։

Ճանապարհին ոչ ոք չէր երևում, միայն երբեմն պատահում էին բերդից փախստականներ, որոնք մի և նոյն հարցերն էին առաջարկում. «ո՞ւր էք գնում, բերդը շուտով կը պաշարվի»...

Երեք ճանապարհորդներից մէկը սափրիչ էր,

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Զաքարիա Գրիգորեանցից նրա հրատարակած «Թէոդորոս Ռշտունի» գիրքը, հեղինակութիւն Ներենցի։ Գիրքը տպված է Ց. Մարիրոսեանի տպարանում, այս 1881 թվին և արժէ 1 ռուբլ։

—

Մայիսի 25-ին սկսվեցան հարցաքննութիւններ Հալաթարի Ս. Մարիամեան օրիորդաց դպրոցում և շարունակվելու են մինչև 29 մայիսի։ Դպրոցը գտնվում է Լաղարեվսկի փողոցում, Յովսէփ Մէլիք-Շահնազարեանցի տանը։

—

Մեզ խնդրում են յայտնել որ Շուշում դուրս եկաւ մամուլի տակից «Զորս մանրավէպ» գրքոյկը։ Վէպիկներից երեքը Ալֆոնս Դոդէից են թարգմանված։ Գինը 20 կոպէկ է։ Հարիւրով առնողներին զիջումն կը լինի։ Գնել ցանկացողները պէտք է դիմեն այս հասցէով. Шуша, Семеону Ахумянцъ.

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ, մայիսի 21-ից մեզ գրում են։ «Երէկ, ժամը երկուսից սկսած մինչև երեկոյեան ժամը եօթը այստեղ ձիւն եկաւ և եղանակը բաւական ցրտեց, այնպէս որ բոլորն էլ ստիպվեցան ծածկվել ձմեռվայ վերարկուներով։ Վախենում ենք որ արտերը չը ցրտահարվեն։»

—

Մայիսի 25-ին, յայտնի չէ ինչ պատճառով, միայն Մոսկվայի փոստը ստացվեցաւ Թիֆլիսում, իսկ Ս. Պետերբուրգի փոստը չը ստացվեցաւ։

—

Պ. Թոխմախեանի դասախօսութիւնը «Թիւրքաց Հայաստանի» մասին լինելու է ուրբաթ օր, մայիսի 29-ին, Արծրունու թատրոնում։ Սկիզբը 8 ժամին երեկոյեան։ Դասախօսը ցոյց կը տայ Հայաստանի կերպարների բազմաթիւ նմուշներ։ Տեղերի գինը նոյն է։ Արդէն գնված տոմսակները զօրութիւն ունեն և այդ դասախօսութեան համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

„Independ. Belge“ լրագրում կարդում ենք, որ իրլանդական կալուածական բիլլ երևի սաստիկ ընդդիմադրութեան կը հանդիպի լօրդերի ժողովի կողմից։ Արդէն լօրդ Սալիսբիւրի, պահպանողականների այժմեան առաջնորդը այս օրերս մի ճաշկերոյթի ժամանակ մի յարձակողական ճառ է ասել կալուածական բիլլի դէմ։ Այդ ճառը իր խրստութեամբ վատ տպաւորութիւն է ունեցել ոչ թէ միայն բիլլի կուսակիցների վրա, բայց նոյն իսկ պահպանողական կուսակցութեան անդամներից մի քանիսների վրա։ Մինչև անգամ „Standart“ լրագիրը, որ համարվում է պահպանողականների օրգան, դժգոհութիւն է յայտնում Սալիսբիւրի լօրդի ճառի առիթով։

Գրեթէ ամեն օր անգլիական համայնքների ժողովի մէջ պատահում են տաք վիճաբանութիւններ հրէական հարցի մասին Ռուսաստանում։ Շատ կարելի է, ասում է բելգիական „Indep. Belge“ լրագիրը, որ այդ անընդհատ և ջերմ վիճաբանութիւնները կը ստիպեն անգլիական կառավարութեանը դիմել ռուսաց կառավարութեանը, խնդրելով այդ վերջինին փոփոխել հրէաների մասին գոնէ իր այն օրէնքները, որոնք վերաբերվում են Ռուսաստանում բնակվող օտարահպատակ հրէաներին։ Եւ ինչպէս երևում է Զարլս Դիլկի ժողովին տուած բացատրութիւններից, այդ քայլն արդէն մասամբ արած է։ Անգլիան, Գերմանիան, Աւստրիան և Ամերիկան արդէն դիմել են ռուսաց կառավարութեանը, որպէս զի սկսեն բանակցութիւնները Ռուսաստանի հետ այն միջոցների վերաբերութեամբ, որ ռուսաց կառավարութիւնը գործ է դնում այդ պետութիւնների հրէայ հպատակների դէմ, որոնք ճանապարհորդում են, կամ ժամանակաւորապէս են բնակվում Ռուսաստանում։

—

ԲՕԼԳԱՐԻԱ

—

Բօլգարիայից ստացված տեղեկութիւններից երևում է, որ գիւղական ապգաբնակութեան շարժումը հետզհետէ մեծ չափեր է ստանում։ Ժողովուրդը անբաւական է իր այժմեան դրութենից և գանգատվում է հարկերի ծանրութեան վրա։ Բօլգարացիներից շատերը ցանկութիւն են յայտնում ռուսաց հպատակութիւն ընդունել։ Օրինակի համար Լօմա նահանգի բընակիչները, գանգատվելով տասանորդ հարկի վրա, ասում են. „մեր իշխանութիւնը տասանորդ է պահանջում։ Նա գործը թիւրքաց ձևով է կատարում, իսկ թագաւորը չէ կամենում տասանորդի պահանջելը“։

Նշանաւոր է այն հանգամանքը, որ բօլգարացիները այնպէս են անուանում իրանց կառավարութեանը, ինչպէս թիւրքերը անուանում էին ապստամբ բօլգարացիներին, կարծես թէ նրանք իրանց իշխանութիւնը ապօրինի են համարում։ Դրանով է մեկնվում, որ բօլգարացիները դժուարութեամբ են գանգատվում իրանց իշխանութեանը։ Այս իրողութեան պատճառներից մէկն էլ բօլգարացի ատիճանաւորներն են, որոնք գանցառութեան են տալիս տեղացիների գանգատները և շատ անգամ նրանց դուրս են անում, իսկ աւելի յամառներին մինչև անգամ կալանաւորում են։ Առհասարակ բօլգարական վարչութիւնը շատ վատ է և իրանց ատիճանաւորներին բօլգարացիները թիւրքի որդիք են անուանում։ „Ժանդարմները նոյն զապտիներն են, ասում են բօլգարները։ Նրանք առանց հետամուտ լինելու ծեծում են և կալանաւորում։ Գանգատվելու ժամանակ ատիճանաւորը բաւական շատ յանդիմանելուց յետոյ կը սկսի ծեծել։“ Այսպիսի անբնական դրութիւնը կատարելապէս անտանելի է և դժուար է նրանից ազատվել։ Բօլգարացիների մէջ չը կան փոքր ի շատէ պատրաստված վարչական անձինք, այդ պատճառով իշխանութիւնը ստիպված է այնպիսի անձանց դիմել, որոնք կատարելապէս անընդունակ են։ Տարբաղդաբար բօրգարական անընդունակ վարչութիւնը մեծ կարծիք ունի իր մասին։ Օրինակի համար հարկերը հաւաքելու ժամանակ ոչ մի արտօնութիւն չէ տրվում և ժողովուրդը ստիպված է ամբողջութեամբ վճարել այն բոլորը, ինչ որ նրանից պահանջվում է։ Եթէ մինչև անգամ ամբողջ հարկի տասերորդ մասը չէ վճարված, վարչութիւնը աճուրդով ծախում է պարտատիրոջ կայքը։ Բացի այդ մի քանի հարկեր աւելի մեծ քանակութեամբ են վերցնվում, քան թէ թիւրքաց տիրապետութեան ժամանակ։ Թէպէտ բօլգարացիների տնտեսական դրութիւնը այժմ աւելի լաւ է, քան թէ թիւրքաց տիրապետութեան ժամանակ, բայց այնու ամենայնիւ հարկերի շատացնելը վատ տպաւորութիւն է գործել բնակիչների վրա։

—

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական պատգամաւորների ժողովը վերջացնում է իր օրէնսդրական աշխատանքները։ Պարլամենտական նիստերը այլ ևս հետաքրքիր չեն այն ժամանակից, երբ վճռվեցաւ պատգամաւորներին ընտրելու ձևի հարցը։ Գամբետտա և մի քանի նշանաւոր հանրապետականներ թողին փարիզը և զանազան կողմեր ուղևորվեցան։ Ներկայումս Գամբետտա Ֆրանսիայի համար անհրաժեշտ մարդ է համարվում։ Նա հասարակական կարծիքի ամենանշանաւոր առաջնորդ է և միակ մարդ, որ կարող է հանրապետութեան ապագայ նախագահ լինել։ Ոչ թէ միայն հանրապետականները, այլ և պահպանողականները և միապետականները ձանձրացած էին այն դրութիւնից, որ Ֆրանսիային բացարձակ չէր առաջնորդում երկրի մէջ ամենամեծ հեղինակութիւն և ազդեցութիւն ունեցող մարդը։

Փարիզի լրագիրների մէջ անդադար հեռագիրներ են տպվում Գամբետտայի ճանապարհորդութեան մասին, որին ամեն տեղ թագաւորի պէս են ընդունում։ Ամբոխի ահագին խումբերը, Մարսելիեզայի երգելը, թնդանօթների և հրացանների արձակելը „կեցցէ Գամբետտա, կեցցէ հանրապետութիւնը“ աղաղակները, զանգահարութիւնը եկեղեցիների մէջ, երեք գոյնաւոր դրօշակները, այդ բոլորը Գամբետտայի ճանապարհորդութիւնը հանդիսաւոր և շքեղ են դարձնում։ Տեղական բարբառներով արտասանած ողջոյններին Գամբետտա նոյն բարբառով էր պատասխանում, որ չափազանց հիացնում էր ամբոխին։ Երկաթուղու գնացքը մօտենալով Կահօր, Գամբետտայի մայրենի քաղաքին, անցաւ հանդիսաւոր դրութեամբ։

հագիւ երևում էր նրա գլուխը։ Նա ունէր մի ուրիշ յատկանիշ ևս. ոտատողները առհասարակ կարճահասակ են լինում, բայց բնութիւնը այդ մարդու վերաբերութեամբ մի սխալ էր գործել. նա բարձրահասակ էր և իր սապատներով աւելի նմանում էր ուղտի, քան թէ մի այլ արարածի։

Երկրորդ ուղևորը երիտասարդ էր. դրան սափրիչը կոչում էր իր աշակերտ, բայց աշակերտ լինելու հասակից շատ մեծ էր նա։ Իր ճանապարհորդական մահակի ծայրին անցուցել էր նա մի փոքրիկ խուրջին և դրել էր ուսի վրա։ Այդ խուրջինի սէջ գտնվում էին նրա վարպետի միւս պարագայքը՝ զանազան տեսակ սպեղանիներ, որ լցրած էին փայտեայ փոքրիկ տուփերի մէջ։ Սափրիչը գիտէր և վիրաբուժական արհեստը։ Նոյն խուրջինի մէջ կային և զանազան կտաւեր վէրքեր փափաթելու համար։ Բայց նրա աշակերտի քնքուշ կազմուածքը, երեսի և ձեռքերի մաքուր կաշին, որ, կարծես, դիտմամբ պատած էր թանձր կեղտով,—ցոյց էին տալիս, որ այդ զեղահասակ երիտասարդը ծնված էր աւելի վայելուչ պարապմունքի համար, քան թէ բժիշկ—սափրիչի աշակերտ լինել։

Երրորդ ուղևորը մի պնդակազմ երիտասարդ էր. նրա առողջ և զօրեղ անդամները ամեն ընդունակութիւններ ունէին լաւ բանուոր լինելու համար։ Մի տօպրակի մէջ լցրած պարագայքից, որ կրած ունէր մէջքի վրա, կարելի էր իսկոյն հասկանալ, որ արհեստով նա հիւսն էր։ Տօպրակի մէջ կային մի քանի տեսակ սղոցներ, մեծ և փոքր ուրագներ, շաղափներ և ատաղձագործի այլ գործիքներ։ Դա այն թափառաշրջիկ հիւսներից մէկին էր նմանում, որ գիւղից գիւղ մտնում են գալիս, շինում են կամ սղղում են երկրագործական անօթները։

Դեռ արեգակը մայր չէր մտել, նրանք հեռուից տեսան բերդը։ Նա գտնվում էր Փուխուրութայ *) լեռների մէջ և առջևից, խոր ձորի միջով, վազում էր Հալիձորի գետը։ Անառելի բերդը շրջապատած էր ամուր պարիսպներով, որի հպարտ աշտարակները բարձրանում էին դէպի վեր, կարծես, ձգտելով մրցութիւն անել սրածայր լեռների հետ։ Այդ բերդը առաջ պատկանում էր Ղափանի հայոց իշխաններին, իսկ այժմ նրան գրաւել էր Աղամազ-Կուլի անունով մի թուրք բռնապետ, որ ահի և սարսափի մէջ էր պահել բոլոր շրջակայքը։

Ուղևորները, որ առաջ չտապով էին գընում, երբ հեռուից՝ տեսան բերդը, սկսեցին մեղմացնել իրանց քայլերը։

—Շտապել պէտք չէ, հարկաւոր է մտնել բերդը ուղիղ այն ժամանակ, երբ խաւարը բաւական պատած կը լինի, ասաց սափրիչը։

—Շուտով կը մթնի, արևը մայր մտնելու վրա է, ասաց նրա աշակերտը։

Հիւսը ոչինչ չը խօսեց, որովհետև այդ միջոցին մօտեցաւ մի ուրիշ ուղևոր, որ գալիս էր ճանապարհի հակառակ կողմից։ Նա ողջունեց առաջիններին նոյն խօսքերով, որպէս ողջունում է մահմեդականը մահմեդականին։ **) Ուրվհետև երեք ուղևորների թէ հագուստի ձևերը և թէ արտաքին կերպարանքը ոչինչով չէին ցոյց տալիս, որ նրանք քրիստոնեայ լինէին, թէև իրանց մէջ հայերէն էին խօսում։

—Երևի, բերդից էք գալիս, հարցրին նրանից։

—Ուղիղ բերդից, պատասխանեց նա կանգնելով։

—Ինչ խաբար կայ։

Նա պատմեց, թէ շրջակայ գիւղերի բոլոր մահմեդականները փախել, մտել են բերդի մէջ և մեծ երկիւղով սպասում են բէկի զօրքերի պաշարելուն։ Խանը ամրացնում է բերդը և բնակիչներին զէնքեր է բաժանում, որ ընդդիմանան։ Բայց ժողովրդի սարսափը այնքան մեծ է, որ յուսահատութեան մէջ են ընկած։ Մօլլաները լցրել են մէչիթները, հրաւիրում են մարդկանց աղօթել և Աստուծուց օգնութիւն խնդրել։

Այդ պատմութեան ժամանակ սափրիչի դէմքի վրա երևաց բարկութեան նման մի բան, և ձեռքը դնելով ածելիների պահարանի վրա, ասաց.

—Ախ, եթէ այդ անհաւատ բէկին տային իմ ձեռքը, ես մեծ ուրախութեամբ այդ ածելիով նրա կոկորդը կը կտրէի։

—Իմ ուրագով աւելի յարմար կը լինէր նրա գլուխը ջարդել, մէջ մտաւ հիւսը։

—Ո՞ւր էք գնում, հարցրեց սափրիչը։

Ուղևորը նկատելով իր նախանձախնդիր խօսակիցների վրդովմունքը դէպի «անհաւատ բէկը», այնքան մտերմացաւ նրանց հետ և այն աստիճան հաւատաց նրանց անկեղծութեանը, որ յայտնեց իր ինչ մարդ լինելը և ուր գնալը։

—Ուրեմն դուք սուրհանդակ էք, խանից նամակ էք տանում, հարցրեց սափրիչը։

—Նամակ եմ տանում Ֆաթալի խանին, պատասխանեց սուրհանդակը.—պէտք է էգուց առաւօտեան հասցնեմ։

—Աստուած ոտներիդ զօրութիւն տայ, ասաց սափրիչը.—էգուց առաւօտեան կը հասցնես, ի հարկէ, կը հասցնես։ Երևի, խանը օգնութիւն է խնդրում։

—Այո, օգնութիւն է խնդրում, եթէ Զեվուն առնվի, նրանից յետոյ Որոտնայ բերդը, Բաղաբերդը, որտեղ նստած է Ֆաթալի-խանը, հեշտութեամբ կը տիրեն։ Այս պատճառով Ֆաթալի խանը պարտաւոր է օգնել մեր խանին։

—Աստուած յաջողէ, պատասխանեց սափրիչը մի առանձին զգացմունքով։— Շտապեցէք, եղբայր, շտապեցէք, մենք բաւական ճանապարհից յետ զցեցինք ձեզ։

Միամիտ սուրհանդակը չը նկատեց, թէ ինչպէս սափրիչը վերջին խօսքերի միջոցին նայեց հիւսի երեսին և իր յօնքերի խորհրդաւոր շարժուածքով մի գաղտնի ակնարկութիւն արեց նրան։ Հիւսը իսկոյն հասկացաւ, թէ ինչ էր կամենում ասել նա։

Սուրհանդակը մնաք բարով ասելով, կամենում էր բաժանվել իր խօսակիցներից։ Այդ միջոցին սափրիչը բռնեց նրա ձեռքից, և մի կողմ տանելով, ասաց.

—Եղբայր, այդ ճանապարհով մի գնա, ամենրոպէ կարող ես ընկնել բէկի մարդիկների ձեռքը. սատանայի ծնունդները ամեն տեղ սար ու ձոր բռնել են. եկ, այս կողմից քեզ մի լաւ ճանապարհ կը ցոյց տամ, համ մօտիկ է, համ անվտանգ։

---

*) Ոմանք գրում են Փուխսարաթայ։

**) Մահմեդականը մեղք է համարում քրիստոնեային ողջունել այն արաբական խօսքերով, որ ընդունված է գործ ածել միայն մահմեդականին ողջունելու ժամանակ։ Քրիստոնեաների վերաբերութեամբ գործ են ածում ուրիշ ասացուածներ։

ներից։ Ամբոխը կանչում էր. „կեցցէ մեծ քաղաքացին“։ Երկաթուղու սենեակները զարդարվում էին ծաղիկներով, իսկ մայրերը մօտեցնում էին իրանց երեխաներին Գամբետային, խնդրելով նրանց համբուրել։ Երկաթուղու կայարանի վրա կահօրի մէջ Գամբետային ընդունեցին քաղաքապետը, պոլիցիական պրեֆեկտը և երևելի մարդու ծերունի հայրը, որոնց հետ Գամբետա կառք նստեցաւ։ Քաղաքի բոլոր բնակիչները հետևում էին կառքին, որ անցնում էր զօրքերի մէջ։ Գամբետային այցելեցին քաղաքի բոլոր նշանաւոր պաշտօնական և մասնաւոր մարդիկ։ Նրա բնակարանը շրջապատված էր ամբոխով, որ անդադար կանչում էր „կեցցէ Գամբետա“։ Գիշերը քաղաքը լուսաւորված էր։ Ի պատիւ Գամբետայի այցելութեան՝ կահօրցիները մեդալ են կտրել։ Այն տան վրա, որտեղ ծնվել է Գամբետա, մի տախտակ է կպցրած այդ անցքը յիշեցնող մի գրութեամբ։ Պատերազմական մինիստր գեներալ Ֆարը հրամայել է բոլոր զօրքերին զինուորական պատիւ տալ Գամբետային։

Գամբետայի արտասանած ճառը Կահօրի մէջ կատարելապէս խաղաղասէր բնաւորութիւն ունէր։ Նա մերժեց տարածված լուրերը իբր թէ ինքը կամենում է առաջարկել իր գերիշխանութիւնը և որ պատերազմական դիտաւորութիւն ունի։ «Ֆրանսիան խաղաղութիւն է ցանկանում, ասել է Գամբետա։ Հանրապետականները նոյնն են ցանկանում, ինչ որ Ֆրանսիան, այսինքն կարգապահութիւն և խաղաղութիւն, ազատութիւն և առաջադիմութիւն։“

Լիոնի մէջ նորերումս կոմունիստների ժողով կայացաւ, որին մասնակցեցին մօտ 1200 մարդ։ Բանալով ժողովը՝ նախագահը ասաց. «Մեծ քաղաքացի Լուիզա Միշել դեռ չէ եկել։ Մինչև նրա գալը ես ձեզ կը ներկայացնեմ նոյն Պաուլա Մինկին, որին պրոկուրորական իշխանութիւնը հալածում է Մարսելի մէջ։ Պաուլա Մինկ, բարձրանալով ամբիոնը, սկսում է խօսել „հասա բարբարոս“ Գամբետայի մասին, որ կամենում է իշխանութիւնը իր ձեռքը գցել, բայց որի դէմ գործ կը դնվեն նիհիլիստների յայտնի միջոցները, այսինքն ճայթող ռումբեր։ Այնուհետև Պաուլա Մինկ նկարագրում է Մարսելի ժողովը, որտեղ նա „թոյլ և անզօր կինը“ երկու ժամ շարունակ ձեռքին բռնած ունէր կարմիր դրօշակը, սարսափելով պոլիցիականներին մէկ ծակերի մէջ թաքնվել։ „Մարսելի մէջ, շարունակում է Մինկ, մենք աղմուկ էինք գցում, անկարգութիւններ էինք անում, բայց մեծ բաւականութիւն չը ստացանք, որովհետև ոչ ոք չէր ընդդիմադրում։ Այժմ ինձ հալածում են, հինգ կէտերի մէջ մեղադրելով, և կամենում են ինձ բանտարկել։ Միայն թէ ինձ Մարսելի մէջ են փնտռում, մինչդեռ ես այստեղ եմ։ Ահա ինչ է նշանակում խաբել պոլիցիականներին։“ Պաուլա Մինկին ժողովը կարմիր փունջ ընծայեց։

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Բերլինից ստացված տեղեկութիւնների համեմատ, իշխան Բիսմարկ, իր պարլամենտական երեկոներից մէկի ժամանակ, բանուորներին դժբաղդ դէպքերի դէմ ապահովելու օրինագծի մասին նկատել է, թէ նա կաշխատի, որ պետութիւնը անպատճառ մասնակցի այդ գործին։ Եթէ օրինագիծը այժմ չընդունվի պարլամենտի մէջ, նա ապագայում նոյնութեամբ նորից կառաջարկվի։ Համբուրգ քաղաքը Գերմանիայի մաքսային դաշնակցութեան հետ միացնելու մասին իշխան Բիսմարկ ասել է, որ նա կիրագործի իր այդ դիտաւորութիւնը, չը նայելով պարլամենտի ընդդիմադրութեանը և վճիռներին։

Գերմանական պոլիցիան արգելեց բանուորների ժողովը, որ պէտք է քննէր բանուորներին ապահովելու օրինագիծը։ Այսպիսով սոցիալական վերանորոգութիւնները սկսելուց առաջ բանուորների և իշխան Բիսմարկի կառավարութեան մէջ անբաւականութիւն պատահեց։ Շատ բանուորներ կալանաւորված են։

Գեօտինգենի մէջ նշանաւոր անկարգութիւններ պատահեցին վարչական մի կարգադրութեան պատճառով, որի համեմատ կաֆէները պէտք է 12 ժամին փակվէին։ Գիշերը ուսանողները յարձակվեցան պոլիցիականների վրա, իսկ հասարակութիւնը պաշտպանում էր ուսանողներին։ Կառավարութիւնը ստիպված էր զօրքեր ուղարկել կարգապահութիւնը վերականգնելու համար։

Պոզնանի մէջ պոլիցիան պատերից գծլեց հետևեալ բովանդակութեան ազդարարութիւններ։ „Մահ հրէաներին, ուրբաթ մայիսի 27-ին գիշերվայ 12 ժամին այստեղ ոչ մի հրէայ կենդանի չի մնայ“։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Աւստրիայի խօրվատիա նահանգում կանանց իրաւունքների հարցը մի նոր քայլ արաւ։ «Polit. Corr.» լրագրին գրում են Զագրէբից, որ առաջիկայ քաղաքային և նահանգական ընտրութիւնների մէջ կանայք էլ կը մասնակցեն։ Ընտրողական ցուցակների մէջ, որոնք հրատարակված են Զագրէբում 3200 ընտրողների թւում գտնվում են 805 կանայք։

—Սպանիայի մայրաքաղաքում, Մադրիդում, այս օրերս ուսանողները մի մեծ հանդէս կատարեցին Կալդէրոնի 200 տարվայ յօբելեանի յիշատակին։ Հանդէսը շարունակվեց չորս ժամ։

—Աւստրիայի Լվով քաղաքում կազմվեցաւ մի մասնաժողով նիւթապէս օգնելու համար հարաւային Ռուսաստանից գաղթական հրէաներին, որոնք վռնդվեցան այդտեղ եղած ջարդից։ Նուիրատուութիւնները շատ առատ են լինում։ Մասնաժողովի գլխաւոր մասնակիցները լեհացիներն են։

—Ալժիրիայում յայտնվեցաւ մի ընդարձակ դաւադրութիւն։

—Պաուլա Մինկ անունով կինը, որ ղեկավարում էր հակառուսական ցոյցերը Մարսէյլում, լեհացի գաղթական Մակարսկու աղջիկն է։

—Էմիլ դը-Ժիրարդէնի տեղ, որ նորերումս վախճանվեց, ֆրանսիական ազգային ժողովի պատգամաւոր ընտրվեց հանրապետական Անատոլ դը-Լաֆորժ։ Սրա հակառակորդները միապետական ուղղութեան «Soleil» լրագրի խմբագիր Հերվէ և արմատական Դիւբուա աննշան ձայներ ստացան։

—Բոլգարիայի Ալէքսանդր իշխանը որոշ կերպով հարց է դրել բոլգարական ազգային ժողովին. կամ ինքն, կամ սահմանադրութիւնը։ Նա պահանջում է իր համար եօթ տարվայ լիազօր իրաւունքներ, իսկ եթէ չընդունվեն այն փոփոխութիւնները որ նա առաջարկում է սահմանադրութեան մէջ, այն ժամանակ նա կը հրաժարվի գահից։ Կարծում են որ ազգային ժողովը կը մերժի իշխանի առաջարկութիւնները։ Ասում են թէ իշխանը գործում է յետադէմ ուղղութեամբ Գերմանիայի, այսինքն իշխան Բիսմարկի թելադրութեամբ։ Բոլգարիայի մի յայտնի կուսակցութիւնը աշխատում է միացնել Բոլգարիայի իշխանութիւնը արևելեան Ռումելիայի հետ։ Այդ շարժումը աւելի և աւելի ընդարձակութիւն է ստանում։

—Ֆրանսիական պատգամաւորների ժողովում ընդունված է Գամբէտտայի առաջարկութիւնը ցուցակներով ընտրութեան ձևի մասին։ Բայց ցուցակներով ընտրութեան օրինագիծը մեծ արգելքի է հանդիպել Սենատի մէջ։

—«Presse» լրագրում կարդում ենք որ Ակսակովի յօդուածը, որ ուղղված էր բոլգարական ինտելիգենցիայի դէմ, շատ վատ տպաւորութիւն ունեցաւ Բոլգարիայում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆ

ՄՈՍԿՎԱ, 24 մայիսի։ Այսօր հաւաքվեցան համալսարանի մէջ պատգամաւորներ Ռուսաստանի բոլոր տեղերից Պիրօգովի յօբելեանի պատճառով։ Թագաւորը և բարձրագոյն այլ անձինք ողջունեցին Պիրօգովին հեռագիրներով։ Պատգամաւորները ներկայանում էին մինչև երեկոյեան 5 ժամը։ Պիրօգով պատասխանեց մի ճառով։

ՓԱՐԻԶ, 24 մայիսի։ Օրանից հեռագրում են, որ հեռագրական վերակացու Բրենդար իր ուղեկիցների հետ սպանված է Ֆրենդի և Ժերվիլի մէջ։ Սպանվածները 26 մարդ են։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 37 կ., չորրորդ 94 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 50 կ., երկրորդ 218 ր. արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր. 50 կ., երկրորդ 93 ր. 75 կ., 37 կ., երրորդ 93 ր. 50 կ., ոսկի 8 ր. 45 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,53 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 209 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 258 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Այս խօսքերով նա դուրս հանեց սուրհանդակին մեծ ճանապարհից, տարաւ դէպի մի նեղ շաւիղ, որ անցնում էր թփապատ բլուրների միջով և յետոյ ճիւղաւորվում էր դէպի զանազան կողմեր։ Սուրհանդակին ես ծանօթ լինելով այդ ճանապարհը, շնորհակալութիւն յայտնեց սափրիչի բարի խորհրդի համար, ասաց, ինքը ամենևին չէր մտածել այդ մասին։

Այդ խօսակցութեան ժամանակ հիւսը կանգնած էր սուրհանդակի ետեի կողմում. երբ վերջինը շարժվեցաւ, կամենում էր գնալ, նա ձեռքը առագաստեամբ տարաւ դէպի իր ուսից քարշ ընկած տոպրակը, և նրա միջից ուրպի հանելը ու սուրհանդակի գլխին մի սաստիկ հարուած տալը՝ մի բոպէի գործ եղաւ։

Շուարած, սասանված սուրհանդակը ձեռքը տարաւ դէպի ատրճանակը, որ քարշ էր ընկած նրա գօտիից։ Այդ միջոցին սափրիչի աշակերտը դանակը խրեց նրա կուրծքի մէջ։ Նա ընկաւ գետին։ Հիւսը զօրեղ ձեռքով դիակը քարշեց ճանապարհի մի կողմը, ծածկեց թուփերի մէջ, նախապէս նրա ծոցից հանելով նամակը, որ նա պիտի տանէր Ֆաթալի-խանին, բերդի պաշտպանութեան համար օգնութիւն խնդրելու։

Արևը արդէն մայր էր մտել. երեկոյեան խաւարը բաւական թանձրացել էր։ Երթևեկութիւնը դէպի ամեն կողմ դադարած էր։ Երեք ուղևորները, որպէս թէ կատարել էին մի սովորական գործ, հանգիստ, անխռով կերպով շարունակեցին իրանց ճանապարհը։

—Եթէ լոյս լինէր, ես շատ կը ցանկանայի այդ նամակը կարդալ, ասաց հիւսը։

—Առանց կարդալու ես, ես կարող եմ ասել, թէ նրա մէջ ինչ գրված կը լինի, պատասխանեց սափրիչը։—Մեզ հարկաւոր էր այսքան միայն, որ այդ նամակը Ֆաթալի-խանի ձեռքը չը հասնէր։—Մենք ուշանում ենք, եղբայրներ, մի փոքր ոտքերիդ ուժ տուեցէք, աւելացրեց նա։

Նրանք հասան բերդը, երբ գիշերից բաւական անցել էր։ Բերդի մէջ տիրում էր խորին լռութիւն, երբեմն միայն լսելի էին լինում գիշերապահ պահապանների զգուշացնող ձայները։ Բոլոր դռները կողպված էին. անկարելի էր ուրիշ տեղից ներս մտնել. բարձր պարիսպները միանգամայն անմատչելի էին կացուցել աւազակների այդ որջը։

Նրանք դիմեցին դէպի բերդի մի կողմում ընկած ձորը, որի խորութեան միջով անցնում էր Հալիձորի սրնթաց գետը։ Գետի ափերի վրա ձորի երկարութեամբ, տարածվում էին դեղեցիկ, մրգաբեր այգիներ և ձեռատունկ ծառեր, որոնք այժմ ծածկված էին գիշերային խաւարի մէջ։ Այստեղ մէկին որոնում էին նրանք։

—Բըժիշ... բըժիշ... կոչեց սափրիչը այնպիսի մի ձայնով, որպէս հոգատար տանտիկինը կոչում է թուփերի մէջ կորած, մոլորված հորթին։

Հորթը չը յայտնվեցաւ։ Սափրիչը կրկնեց իր կոչը։ Այդ միջոցին հեռուից լսելի եղաւ հորթի ձայնը՝ «բա-այ»... և մի մարդ, որ ծածկված էր ծառերի մէջ, դուրս եկաւ իր թագստի տեղից, մօտեցաւ երեք ուղևորներին։

—Վերջապէս եկաք դուք, ասաց նա հազիւ լսելի ձայնով.—հոգիս դուրս եկաւ սպասելուց, ինչու այդքան ուշացաք։

—Ճանապարհին մի փոքրիկ գործ ունեցանք խանի սուրհանդակի հետ, այդ խլեց մեզանից մի քանի բոպէ, պատասխանեց սափրիչը։—Դու այն ասա, որ կողմից պիտի տանես մեզ։

—Ուղիղ բերդի դռնից, ասաց անծանօթը,—և ինքը դռնապանը կը բաց անէ դուռը։ Եկէք իմ ետեից, ես ամեն բան սարքել եմ...

Բոլորը միասին սկսեցին դիմել դէպի բերդի գլխաւոր դուռը։

Եթէ մէկը ցերեկով տեսնելու լինէր այդ անծանօթ մարդուն, իսկոյն կընդունէր նրան բերդի տէր խանի ֆէերաշներից մէկի տեղ։ Նրա թէ հագուստը և թէ զէնքերը այդ էին ցոյց տալիս, թէև նա այժմ խօսում էր հայերէն այնքան վարժ կերպով, որպէս կը խօսի ամեն մի սիւնեցի հայ։

Երբ հասան բերդի գլխաւոր դռանը, անծանօթը սկսեց բաղխել դուռը, ձայն տալով այժմ քուրդերէն լեզուով.

—Հասան, բաց արա։

Հասանին թէև հրամայված էր գիշերը ոչ ոքի առջև չը բաց անել դուռը, բայց խանի ֆէերաշները բացառութիւն էին կազմում։ Իսկ նա աւելի կարգ պահպանելու համար, ներսից հարցրեց.

—Գիշերվայ անունը։

—«Ադաանիս», պատասխանեց անծանօթը։ *)

Լսելի եղաւ ծանր բանալի դառնալու ձայնը և շուտով ահագին դարվազէի դռնակը բացվեցաւ։ Անծանօթը ներս մտաւ, նրան հետևեցին միւսները։ Բացի դռնապանից այնտեղ կային մի խումբ պահապաններ։ Մի մեծ լապտեր լուսաւորում էր մուտքը։

—Դրանք ովքեր են, հարցրեց դռնապանը, ցոյց տալով երեք ուղևորների վրա։

—Մոռացար, ես առաւօտեան այս տեղից դուրս գալու ժամանակ քեզ ասեցի. Հասան, ես գնում եմ, բայց գիշերը կրկին կը վերադառնամ, զգուշ կաց, որ դուռը շուտ բաց անես։—Ասեցի՝ խանի կնոջ ատամները ցաւում են, գնում եմ մի սափրիչ կանչելու։ Հիմա տեսնում ես, դա սափրիչն է, դա նրա աշակերտն է, դա էլ մի հիւս է, որ խանի համար փայտից մի այնպիսի սատանայական բան պիտի շինէ, որ նրանով ահագին քարեր կարելի է նետել թշնամիների վրա, երբ մեր բերդը պաշարելու լինեն։

Թէ խանի կնոջ ատամների ցաւը և թէ բերդի պաշարումը այնպիսի կարևոր բաներ էին, որ երկուսին էլ պէտք էր շուտափոյթ օգնութիւն հասցնել։ Մանաւանդ Հասանին աւելի դրաւեց այն «սատանայական բանը», որ պիտի շինէր հիւսը, և իր հաւանութիւնը յայտնելով, ասաց.

—Այդ լաւ բան է, եթէ մի այսպիսի բան չը լինի, այն ժամանակ մեր բերդը Աստուած ազատէ...

Երեք ուղևորները անծանօթ մարդու հետ հեռացան դռնապանից, բայց փոխանակ խանի տունը գնալու, կորան բերդի խուլ փողոցների մէջ, որ պատած էին գիշերային խաւարով։

(Կը շարունակվի)

*) Պարսկաստանում մինչև այսօր պահպանվել է այդ կարգը. բերդապահը ամեն օր նշանակում է գիշերվայ անունը և որպէս պարոլ հաղորդում է ոստիկանութեան գործակատարներին։ Երբ գիշերը փողոցներում հանդիպում են մի մարդու, որ չը գիտէր գիշերվայ անունը, իսկոյն կալանաւորում են նրան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԻԱԽՈՏԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Կովկաս հիւրանոցի տակը, Երեվանեան հրապարակի վերայ ստացված է

ԿՕՍՏԱՆԴԻՆՕՊՕԼԻՑ

Իսկական Տաճկաստանի ծխախոտ նոր կոտրած

Սամսօն և կէօբէք

որ գերազանցում է թէ համով և թէ արմատով

2—3 (2)

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԷԺԱՆ ԳՆՈՎ, ծախվում է արտասահմանի շքեղանդիական **ՑԵՄԵՆՏ** փոթիի մէջ էլիսբար **ԲԱԲԱԼՕՎԻ** մօտ, Քուլթայիսի մէջ **ԿՈՒՐՑՕՎԻ** մօտ։ Նոյնպէս ծախվում են չափաւոր գներով **ԲՆԱԿԱՆ ՄԵՂՐԱՄՈՄԵՐ** սեփական գործարանից, **ԹԻՖԼԻՍՈՒՄ** Սիոնսկայա փողոցի վրա, **ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ** և **ԳՕՐԻՈՒՄ**։

ԻՎԱՆ ԿՈՒՐՑՕՎ

3—11 (2)

Ժողովել եմ, ժողովում եմ և շուտով 'ի լոյս պէտք է ածեմ հայկական ձայնագրութեամբ „Ծաղկաքաղ ձայնագրեալ երգարան.“ ուստի խնդրում եմ ձայնագրագէտներին և այն պարոններին, որոց մօտ գտանվում են ազգային երգեր թէ հայկական և թէ եւրոպական ձայնագրութեամբ (նոտաներով) բարեհաճել մինչև յառաջիկայ օգոստոս ամիսը ուղարկել ինձ։ Երգեր ուղարկողների ազգանունները կը տպագրուին երգարանի վերջը և միմի օրինակ էլ ձրիապէս կը ստանան։ Վարձատրութիւն պահանջողները ևս կարող են իրանց պայմանները յայտնել։ Իմ հասցէն։ Տփխիս, Եղնիկ քահանայի Երգնկեանց։ 2—10

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննութիւնները

Մայիսի 22 և 23-ին Կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.
„ 25-ից—30-ը Հաւլաբարի Մարիամեան օր. ուսումն.
„ 28 և 29-ին Կուկիու Թանդոյեան օր. ուսումն.
„ 30-ին „ Հաւլաբարի Ս. Մինաս եկ. ուսումն.
Յունիսի 1 և 2-ին Կուկիու Ս. Աստուածածին եկ. ուսումն.
„ 3 և 4-ին Ջրաշէն եկ. ուսումնարաններում.
„ 5-ին „ Շամքոռեցոց եկ. ուսումնարանում.
„ 6-ին „ Ձորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.
„ 8-ին „ Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.
„ 9-ին „ Զուղուրէթի Ս. Աստուած. եկ. ուսումնարաններում.

Թեմական վերատեսուչ Բարխուդարեանց

Ձը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն՝ **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի։ Անգլիական բէվօլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, ջօնսօնի **ԿՈՂՊԷՖՆԵՐԸ**, Տուրնօրի **ԳՐԻՁՆԵՐԸ** և էկստրակտ կակաշօկոլադի ծախելու համար, որոնք Փարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան։ **ՀՈՏԱՒԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.։ Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբողջ հագուստ 15 ր., կոնֆեկտներ հապի դէմ 60 կ. ֆունտը։

79—100

Վ ԱՐՇԱՎԱ։ Իր յատկութիւններով մարմնի մասերի և մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրօղիստների մօտ։ Գլխաւոր դէպօ Նիւթի հնարող Փարմացիի մագիստրոս **Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ** դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Իլկտօրարնի փողոց № 35. Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ. պէտք է զգուշանալ խարդախութիւններից և պահանջել, որ իւրաքանչիւր արկղիկը ունենայ գործածութեան մեկնութիւնը և Փարիզի աշխարհանդէսի մեդալները։

Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ

5—20 (1)

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ.։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻԻՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին դլխայաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

71—100

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբելի և հայելիների։

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում Մի-ՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈԳՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

6—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՖՖԻԻ „ԽԵՆԹԸ“** անունով վիպասանութիւնը։ Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահտեսի-Յակոբեանցի տպարանը։ ԲԱԳՈՒ՝ պ. Աղեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷԶ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБѢЛУ АПРѢСЯНЦУ.

Թիֆլիզում կազմվում է «Մարմնամարզական ընկերութիւն» (Гимнастическое общество), որի նպատակ է տալ իր անդամներին միջոց վարժվելու մարմնամարզութեան սրախաղութեան (фехтованье) և հրացան արձակելու մէջ, քաղաքից դուրս զբօսանքներ և ուրիշ թոյլ տված զուարճութիւններ անել, որոնք զարգացնում են ֆիզիկական կարողութիւնը։

Ընկերութեան կանոնադրութիւնը տէրութիւնից արդէն հաստատված է և տպված է № 90 «Кавказъ» լրագրի մէջ, ապրիլի 25-ին։

«Մարմնամարզական ընկերութեան» անդամ գրվել և տարեկան 10 ռուբլի վճարել կարելի է։

1) Փոխարքայի գլխաւոր կառավարութեան դեկտարտամենտում, Կարլ Կարլովիչ կեստերի մօտ, ամենայն օր 11 ժամից մինչև ժամի 3 ցերեկվայ։

2) Վիկտոր Աղեքսանդրովիչ Դինդելշտեդտի մօտ 6-ից մինչև 8-ը երեկոյեան, Թամամիվի տանը, Սօլդատսկի բազարի վրա։

3) «Кавказъ» լրագրի խմբագրութեան մէջ։

4) Աղեքսանդր Աղեքսանդրովիչ Բրունսի մօտ։ Միխայելովսկայա փողոցի վրա, ռուսական մագազինում։

„ԽԵՆԹԸ“

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՖՖԻԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից։ Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „կենտրօնական գրավաճառանոցում“, „Կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզարջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագազինների մէջ։

Գինն է 1 ռուբլ 20 կոպ.։

„ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԱԿԻ ՄԷՋ, Երևանսկայա հրապարակի վրա, Չակլու տանը բացված է ստորագրութիւն յօգուտ 'ի Տէր Հանդուցեալ կայսր Աղեքսանդր II-ի **ՈՐԲԱՆՈՅԻ**, որ բացվելու է Թիֆլիսի մէջ։

7—15

Արդէն վաճառվում է

ԻՆՉ ԲԱՆ Է

ԺԱՆՏԱԽՏԸ

Ինչ բանով կարելի է փրկուել նոսրանից և այլ տարափոխիկ տկարութիւններից։ Ժողովրդական և հասարակաց մատչելի խրատ բժիշկ Պ. Ա. Իլինսկոյ։

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրեանց

Գինն է 15 կոպ. 100-ներով գնողներին զիջում կը լինի։ Մեր հասցէն՝ Въ Эривань

А. Гуламирянцу

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կօնֆեկտներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՖՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՁՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, պլօմներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսսրբիչներ, կլեօնկա, դուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խերես, կօնեակ և այլն։ Թէյ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն։ Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մանեկիա, խմոր ԾԱՐԱՒԻ դէմ, ԽԻՆԱՅԻ գինի ջերմի դէմ, կարբօլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկօղեսի համար, պարսկական փոշի։ 2—100

Ներսիսեան դպրոցի մի ուսուցիչ, ամենաչափաւոր գներով և ձեռնտու պայմաններով, պատրաստում է աշակերտներին նոյն դպրոցի բոլոր պատրաստականների, և I, II և III-դ դասատանց համար։

Նոյնպէս պատրաստում է հայ-օրիորդներին Ս. Գայանեան և Յովհաննեան օրիորդաց դպրոցների բոլոր դասատանց համար։

Ցանկացողները, թո՛ղ մինչև յունիսի 15-ը յայտնեն իրենց պահանջները Ներսիսեան դպրոցի տեսուչ պ. Արշակ Նահապետեանին։

2—3

Дозволено цензурою, Тифлисъ. 26 Мая 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.